

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2016  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Գ. Գաբրիելյանի

Մ. Քարությանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի  
Աշխատակազմի ղեկավար՝

Փ. Կարապետյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի  
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2016 թվականի  
դեկտեմբերի 27-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Ա. Ղաիրամանյան- Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 26.12.2016 թվականի դրությամբ:

/Վ.Մկրտչյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի և 2017 թվականի բյուջեների կազմման գործընթացը ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում

/Վ.Մկրտչյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

4. ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի 30.11.2016թ. N 51/2-4-5347-16 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարան ուղարկված մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարի կողմից իր պաշտոնական լիազորություններն անցնելու վերաբերյալ 29.11.2016թ. միջնորդագրի քննարկում

/Յու.Մանվելյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ/

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի նիստի օրակարգը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 -րդ կետի 13-րդ պարբերությամբ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի նիստի օրակարգը:

**Օրակարգային երկրորդ հարցի** կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-փնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզում սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացի վերաբերյալ հաշվետվությունն արդեն առ 26.12.2016թ դրությամբ (կցվում է ՀՀ Արմավիրի մարզի համայնքների բյուջեային եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը): Նա նշեց, որ կատարված ընդհանուր վերլուծությամբ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերի նվազման պատճառով հավաքագրման մակարդակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ցածր է 2,7%-ով և կազմում է 96,1%:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, մասնավորապես անդրադառնալով հավաքագրման առավել ցածր ցուցանիշներ ունեցող համայնքներին, ընդհանուր կարգով նշեց, որ 2016 թվականի ընթացքում տեղի ունեցած կարկտահարության հերևանքով պայմանավորված գյուղատնտեսական այս տարվա անբարենպաստ պայմաններից անկախ, անհրաժեշտ է մինչև տարեվերջ համապատասխան աշխատանքներ փանել բյուջեներով հախատեսված սեփական եկամուտների (հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ) հավաքագրման առավելագույն արդյունքներ ապահովելու համար:

Մարզպետն անդրադարձ կատարեց նաև խոշոր հարկատուների պարտքերի գանձման և աշխատավարձի ընթացիկ պարտքեր չկուտակելու կարևորագույն խնդիրներին:

**ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝**

**1. անձնական պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների (հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ) հավաքագրման գործընթացին՝ անվերապահորեն ապահովելով**

համայնքի բյուջեով պլանավորված ցուցանիշների կատարումը, ձեռնարկել հնարավոր միջոցներ դրանք առավելագույնի հասցնելու,

2. սեփական եկամուտների արդյունավետ հավաքագրման գործընթացում ակտիվացնել համայնքապետարանների աշխատակազմերում աշխատող և հավաքագրման գործառույթներ իրականացնող բոլոր աշխատակիցների գործունեությունը հավաքագրման բարձր ցուցանիշներ ապահովելու նպատակով:

Օրակարգային երրորդ հարցի կապակցությամբ փեդեկապությանը հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-փնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով մարզի համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի և 2017 թվականի բյուջեների կազմման գործընթացը ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում: Նա մասնավորապես նշեց, որ ներկա պահի դրությամբ ներկայացվել են ընդհանուր թվով 33 համայնքների զարգացման հնգամյա ծրագրեր, որոնցից հաստատվել են 8-ը: Վ.Մկրտչյանը միաժամանակ նշեց, որ գործընթացի հետ կապված աշխատանքները շարունակվում են ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի փեդական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, ինչպես նաև զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի հետ համագործակցված: Անդրադառնալով 2017 թվականի բյուջեների կազմման գործընթացին, Վ.Մկրտչյանը փեդեկացրեց, որ արդեն ավարտվել է նշված գործընթացը բացառությամբ Նոր Արմավիր համայնքի բյուջեի ընդունման, քանի որ ավագանին համաձայն չէ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված բյուջեի նախագծին և չի հաստատվել այն:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Նահրամանյանը, անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցին և անընդունելի համարելով հարկապես համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի կազմման ու հաստատման գործընթացի ձգձգմանը՝ համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց նշված խնդրի

կարևորության վրա, առաջարկեց ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված գործընթացը սեղմ ժամկետում ավարտելու համար:

**Օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Յու. Մանվելյանը, որը ներկայացրեց ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի պետի 30.11.2016թ. N 51/2-4-5347-16 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարան ուղարկված մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարի կողմից իր պաշտոնական լիազորություններն անցնելու վերաբերյալ 29.11.2016թ. միջնորդագիրը(կցվում է):**

Յու. Մանվելյանը մասնավորապես տեղեկացրեց, որ ըստ ներկայացված միջնորդագրի, ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի ղեկավար Արմեն Արարատի խլղությանը, չարաշահելով իր պաշտոնական լիազորությունները, անձնական շահագրգռվածությունից ելնելով՝ ապամոնտրաժել է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով «Նոր Ակունք» ՓԲԸ-ի հաշվեկշռին փոխանցված, Տարոնիկ գյուղի վարչական տարածքում գտնվող պոմպակայանի կիսակառույց շինության թվով 9 հատ երկաթբետոնյա կոնստրուկցիաները և տեղափոխել գյուղի մշակույթի տան հարակից տարածք, «Նոր Ակունք» ՓԲԸ-ին պարճառելով էական վնաս(24.08.2016 թ. որոշմամբ նշանակված շինարարապետի նիկական դատաապրանքագիրական համալիր փորձաքննության եզրակացությամբ նյութական վնասի չափը կազմել է 270.000 ՀՀ դրամ): Մշակույթի տան տանիքի վերանորոգման նպատակով օգտագործված թվով 9 հատ պանելների փոխարեն համայնքը գնել և «Նոր Ակունք» ՓԲԸ-ին է վերադարձրել նոր պանելներ, որի արդյունքում «Նոր Ակունք» ՓԲԸ-ն Տարոնիկ համայնքի, ինչպես նաև համայնքի ղեկավար Արմեն խլղությանի դեմ բողոք, նյութական պահանջ չի ներկայացրել՝ պարճառված վնասը վերականգնելու պարճառաբանությամբ: Արդյունքում 29.11.2016 թ. որոշմամբ N 57122916 քրեական գործով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղաիրամանյանը, անդրադառնալով Յու. Մանվելյանի կողմից ներկայացված միջնորդագրին, առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ նմանափայ օրինախախտումները բացառելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝

- ապահովելու կայացվող որոշումների օրինականությունը և անձնական պատասխանատվությամբ վերաբերվել համայնքային սեփականություն հանդիսացող օբյեկտների նորոգման և հիմնանորոգման նպատակով նյութերի և միջոցների պարշան ընթացակարգով ձեռք բերման գործընթացին:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը, տոնական բարեմաղթանքներով շնորհավորելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձ.Մ.Առուշանյան

